Թափոններ և օրենք

Դասապլան

Ներածություն

Օրենքների իմացությունը «Քաղաքացիական կրթության» կարևոր բաղադրիչ է: «Իրավունքներին» զուգահեռ մենք ունենք նաև «պարտականություններ»: Քանի որ թափոնները դառնում են օվկիանոսների վրա ազդող, վայրի բնության և սննդի մեծ աղբյուրների համար սպասռնալիք ներկայացնող լայնածավալ գլոբալ խնդիր, կարևոր է լինել իրազեկված տեղական և միջազգային օրենքների վերաբերյալ դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելու:

Դասապլանը խրախուսում է թափոնների վերաբերյալ օրենքների ուսումնասիրությունը, վերջինս էլ կարող է նպաստել հետևողական և պատասխանատու կերպով օրենքների իրականացմանը համաշխարհային քաղաքացիության համատեքստում:

Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- կազմել թափոններին վերաբերող օրենքների ցանկ,
- ներկայացնել թափոններին վերաբերող օրենքները:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. կայունության աուդիտի իրականացում, ուսումնական պլանների փոխկապակցում, իրազեկում և ներգրավում:
Ուսումնական ծրագրերի կապակցում. գիտություն, բնապահպանություն, հասարակագիտություն:

Eco-Schools

13-16 Տարեկան

6 CLEAN WATER AND SANITATION

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

13 CLIMATE ACTION

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 45 րոպե՝ ներկայացնելու թափոններին և օրենքին վերաբերող զեկույց:
- **Խմբային առաջադրանք.** շաբաթական 5 ժամ հատկացվում է աշակերտներին առցանց հետազոտություններ կատարելու և թափոնների վերաբերյալ տարբեր օրենքներ ուսումնասիրելու համար:
- **Դասարանային աշխատանք 2.** 90 րոպե արդյունքների ամփոփման և աշակերտների կողմից Էկո-Դպրոցներ ծրագրի հայտարարությունների տախտակին փակցվելու ենթակա նյութ պատրաստելու համար: Այն պետք է ցուցադրվի մեկ ամիս:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- Համացանց
- գրենական պիտույքներ:

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Սկսեք թափոններն ու օրենքը ներկայացնող քննարկումից:
- Դասարանը բաժանեք 3-4 անձից բաղկացած աշակերտական խմբերի:
- Օգնեք աշակերտներին առցանց որոնել թափոններին առնչվող օրենքներ և կանոնակարգեր: Կրկնությունից խուսափելու համար խմբերը կարող են ընտրել տարբեր ոլորտներ.
  - Թափոնների դասակարգմանը վերաբերող օրենքներ:
  - Թափոնների հավաքագրմանը վերաբերող օրենքներ:
  - Թափոնների հեռացմանը վերաբերող օրենքներ՝ ինչպե՞ս և որտե՞ղ:
  - Աղտոտմանն ու նմանատիպ վարքագծին առնչվող օրենքներ:

Ուսուցիչը պետք է յուրաքանչյուր խմբին տրամադրի մեկ շաբաթ՝ հետագա ուսումնասիրություններ կատարելու, թափոնների և օրենքների վերաբերյալ տեղեկություն հավաքելու:

Դասարանային աշխատանք 2

- Խնդրեք աշակերտներին ամփոփել և կիսվել իրենց հետազոտական աշխատանքներով:
- Քննարկեք, թե ինչպիսի պատասխանատվություն է կրում սովորական քաղաքացին օրենքների կիրարկման հարցում:
- Մտագրոհի միջոցով քննարկեք, թե ինչու որոշ օրենքներ չեն գործում, և ինչ կարելի է անել, որպեսզի դրանք ավելի խստորեն պահպանվեն:
- Օգնեք խմբին տեղեկություններ հավաքել և կիսվել դրանցով տարբեր դպրոցների աշակերտների հետ:
- Խնդրեք Էկո-Դպրոցներ ծրագրի աշակերտներին ստեղծել տեղեկատվական տախտակ և այնտեղ փակցնել թափոնների և օրենքի վերաբերյալ հավաքագրված տեղեկությունը:

Գնահատում

Ուսուցիչները կարող են գնահատել արդյունքները՝ հիմնվելով ցուցատախտակի բովանդակության վրա: